

ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրանիկը Սիւնեաց Երկրում

Դ.

ԿՈՒԻԽՆԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ

Սեպտեմբերի սկզբներին Անդրանիկը ստիպւած եղաւ վերակազմելու իր գորամասը, բայց կար աւելի կարեւոր մտատանջութիւն։ Սիսիանի եւ Նախիջեւանի միջեւ ընկած է Գիւմրի - Գժաձոր շրջանը, ուր կային հայկական գիւղերի կողքին եւ թուրքական գիւղեր։ Այդ շրջանը Սիսիանի ռազմական բանալին է։ Եթէ Նախիջեւանից արշաւող տաճկական ոյժը գրաւէր Գիւմրին ու Գժաձորը, Սիսիանի գեմադրութիւնը կը դառնար հարցական։ Տաճիկներն արդէն գրաւել էին այդ շրջանի հայարնակ գիւղերը մինչեւ Բաղամլու։ մնացել էին միայն լեռնային գիւղերը՝ Գիւմրի, Գժաձոր, Նորս եւ Նորս-Մազրա, որոնք աստաջարկութիւն էին ստացել զինաթափ վնելու եւ ենթարկելու տաճկական իշխանութեանը։ Գիւմրի - Գժաձորը երեսուն վերսուով է բաժանւած Սիսիանից։ Այդ գիւղերը ամուր պահելու համար, պէտք էր այնտեղ ունենալ որոշ ռազմական ոյժ։ Բայց նախքան հարւածող Զօրամասից մէկ վաշտ այնտեղ ուղարկելը, պէտք էր կարգաւորել պարենաւորման խնդիրը, իսկ դրա համար անհրաժեշտ էր համարւում հրաւիրել Սիսիանի գիւղական կոմիսարների համագումարը։

Այդ օրերին Անդրանիկի մօտ են գալիս Զանգեզուրի Ազգային Խորհրդի անդամներ՝ Արշակ Շիրինեանը, Գեղէոն Տէր-Մինասեանը, եւ լիազօր Յ. Ստեփանեանը՝ տողերիս դրոյը։ Սեպտեմբեր 5-ին Սիսիանի հայ եւ մալական գիւղերի կոմիսարները հաւաքւել էին Անդեղակոթ։ Ժողովը տեղի ունեցաւ եկեղեցում։ Անդրանիկը յայտնեց իր ցանկութիւնը եւ ուղեց իմանալ ժողովրդի կամքը. արդեօք ժողովուրդը փափաքո՞ւմ է, որ ինքը մնայ Սիսիանում։ Ժողովուրդը տրամադրի՞ր է կուելու տաճիկների դէմ եւ զինաթափ չի՞ լինի երբեք։ Այդ երկու հարցերին դրական պատասխան տալուց յետոյ, ժո-

զովուրդը պէտք է որոշի, թէ արդեօք յա՞նձն առնում է զօրամասի պարենաւորումը եւ ի՞նչ կերպ :

Ժողովին եկած կոմիսարները թէեւ ժողովրդի կամքն էին արտայայտում, քանի որ իրենք նոյն ժողովրդի ընտրած ներկայացուցիչներն էին, բայց որովհետեւ խնդիրը ծանրակշիռ էր, յարմար դասեցին հրաւերել աւելի լայն ներկայացուցչական համագումար Սիսիանի հայ եւ մալական գիւղացիութեան կողմից, ուր եւ վերջնականապէս պիտի որոշէին առաջարկած կէտերը : Այդ համագումարն էլ տեղի ունեցաւ եւ բոլոր կէտերին դրական պատասխան տրւեց :

Երկրորդ ժողովը գումարւեց Սեպտ. 12-ին : Ներկայ էին Սիսիանի հայ եւ մալական գիւղերի կոմիսարները եւ ժողովրդական յատուկ ներկայացուցիչները : Օրակարգն էր՝ ա) Անդրանիկի եւ իր զօրամասի Սիսիանում մնալը կամ չը մնալը, բ) Եթէ հարցը դրական վճիռ ստանայ, նրա պահանջները բաւարարելը, գ) Տեղական ինքնապաշտպանութեան հարց, դ) Թնդանօթների եւ ռազմամթերքի փոխադրութեան հարց : Այս ժողովը տեղի ունեցաւ Անդեղակոթի պատմական եկեղեցում, ուր մի ժամանակ իսրայէլ Օրին էր գաղտնի ժողովներ կազմակերպում հայ մէլիքների մասնակցութեամբ ... Անդրանիկը արտասանեց բացման ճառը եւ գեղեցիկ կերպով բացատրեց ժողովի կարեւորութիւնն ու պատմական նշանակութիւնը : Նա շեշտեց, որ եթէ ժողովուրդը չի ցանկանում իր ներկայութիւնը Սիսիանում՝ թող չմտահոգի թէ Անդրանիկը ուր կերթայ եւ ինչ կանի : Ինքը գիտէ, թէ ուր կերթայ եւ ինչ կանի : Անդրանիկը թողեց ժողովը եւ հեռացաւ, որպէս զի ներկայացուցիչները ազատ արտայայւեն : Մտքերի թեր եւ դէմ փոխանակութիւններից յետոյ՝ ժողովն ուղեց ինդրել Անդրանիկին, որ իր Զօրամասով մնայ Սիսիանում, իսկ զօրքի պարենաւորման համար վճռեց Սիսիանի 22 գիւղերից հաւաքել ըստ բաշխման ցուցակի առաջին նւագ 4000 փութ ցորեն եւ 2000 փութ գարի, իսկ տեղական ինքնապաշտպանութեան համար 20-25 տարեկաններին զինքի տակ առնել, կատարել զօրահաւաք, նըմանապէս ռազմամթերքի փոխադրութեան համար տրամադրել հարկաւոր քանակութեմբ ձիեր : Այդ ժողովի նախօրեակին, զինւորական դատավարութիւնից յետոյ, Զինուորական Խորհուրդի որոշումով, Անդրանիկի հրամանով գնդակահարւեցին զինւորներ կլւրինցի Ս. Հ. եւ շապին-գարահիսարցի Բ. Պ., որոնք Մուլիսութուրեան գիւղի մէջ խեղդամահ էին արել շապին-գարահիսարցի Մկրտիչ Բաշբեօյիւք-եանին՝ նրա ոսկիները յափշտակելու նպատակով : Այդ դէպքը ցնցող տպաւորութիւն թողեց տեղացիների եւ զօրամասի վրա . . . Սեպտ.

տեմբեր 14-ին մեզ կրկին չափազանցւած լուրեր հասան։ իբր թէ Բարդուի ուժերը հասել են Դանձակ, ուր տեղի է ունենում սաստիկ կը-ոխ, իսկ միւս կողմից սուսները հասել են Դուշետ, Թիֆլիզից ոչ շատ հեռու։

Սեպտ. 15-ին Սասունի գնդի հեծելազօրն եւս մեկնում է Գարա-լազեազ. խմբապետ Մուշեղը եւ Հանգուցեալ քաջ Մանուկը հրաժեշտ են տալիս մեզ, մասնաւորապէս Անդրանիկին, ապա մեկնում են Բա-զարչայ, այնտեղից էլ Գարալազեալ։ Սեպտ. 16-ին Գորիսից նամակ ենք ստանում, ըստ որի իբր թէ Բագուի ուժերը Եւլախն են ոմբա-կոծում եւ Ասկեարանից թնդանօթի ձայներ են լսում։ միաժամա-նակ յայտնում են, թէ Գորիսից Շուշի տանող ճանապարհին մի ձո-րում կոփւ կայ։

Սեպտ. 17-ին, Երեկոյեան լուրեր ստացանք Գորիսից, որ Զա-րուղի ձորում կոփւ կայ, իսկ Հայկական մեծ զիւղը, Ղարաղլազն այրում է։ Միւս կողմից, Գիւմրի-Գժաճորի ճակատից եւս անը-ոպաստ լուրեր հասան։ տաճիկները կրկին պահանջ են ներկայացրել Հայերին, որ զինաթափ լինեն եւ պայմանաժամ են տւել։ Տաճիկները ներս են մտնում Գարալազեալի խորքերը։ արգէն մի քանի Հայկա-կան զիւղեր ենթարկել են նրանց։ Լուրեր են պտտում, թէ շուտով 20,000-նոց տաճկական մի բանակ պիտի պաշարէ Սիսիանը, եւ իբր թէ առաջիազացումը տեղի պէտք է ունենայ Արաւիւս (Սիսիան), Գիւմրի եւ Զուլ-Մարտիրոս զիւղերի ուղղութեամբ։

Սեպտ. 18-ին լուր տւին Անդրանիկին, թէ Գիւմրի-Գժաճորի կոմիսարը տրամադրիր է ենթարկելու տաճիկներին, ուստի եւ ան-միջապէս բերել տւաւ նրան եւ Անդեղակոթում զինաթափ արաւ։ Դա մի յաղթանզամ, պարթեւ համկով երիտասարդ էր։ Երբ մառակէր ատրճանակը առին վրայից, այդ հոկան սարսափելի խղճուկ տպաւո-րութիւն թողեց եւ աղաչանք-պաղատանք արաւ, որ մինչեւ Նախիջե-ւան էլ կը զնայ կուելու, միայն թէ վերալարձնեն իրեն իր զէնքերը։ Այս զէպքը բարերար ազդեցութիւն թողեց տատանող զիւղի վրա։ Գժաճորի, Գիւմրիի եւ Անդեղակոթի մեծամեծների խնդրանօք եւ ե-րաշխաւորութեամբ Անդրանիկը չնորհեց այդ կոմիսարին նրա զէն-քերն ու պաշտօնը՝ իստիւ հրամայելով, որ այլեւս տատանելու խըն-դիր չլինի։ Եւ իսկապէս այդ կոմիսարը այնուհետեւ իրեն շատ լաւ պահեց։ Սեպտ. 22-ին, նկատի ունենալով տաճիկների զէպի Սիսիան արշաւելու յամառ լուրերը, Անդրանիկը բաժանեց զինւորներին Սիսիանում գտնուող մեր զինւորական պահեստների մնացողողները։

Արաւիւս-Շիլարի ուղղութեամբ տեղի ունենալիք արշաւանքը ամենից վտանգաւորն էր. եթէ տաճիկներն այդ գծով արշաւէին, ձորով ուղղակի դուրս կը գային Աղուտի-Վաղուտի թրքական գիւղերը, որոնց փախած բնակիչները, նախօրօք իմանալով այդ ծրագիւը, գիշերով կիշնէին եայլազներից եւ կրնէին իրենց քաջ յայտնի ամուռ գիրքերը, որով Սիսիանը կը բաժանէին երկու մասի, եւ Գորիսի հետ հաղորդակցութիւնը կը խուէր: Խաղմական այդ ծրագիւը իրադործելու համար՝ Սիսիանի ծայրամասում գտնող Օրբագիւլ, Զօմարտու եւ Արաւիւս թրքան գիւղերն իրբեւ խարիսխ պիտի գործածէին: Նախիջեւանի կողմից եկած տաճկական զօրամասը այդ գիւղերի մէջ հանդստանալով, կազդուրւելով ու կենտրոնանալով՝ շուտով կարող կը լինէր իրագործել իր ծրագիւը եւ յանկարծակի բերել հայերին:

Այդ առթիւ Անդրանիկը գարձեալ խորհրդակցութեան հրաւիրեց Սիսիանի կոմիսարներին ու վաշտապետներին եւ պարզեց նրանց յիշեալ գիւղերը տեղահան անելու ուղմական անհրաժեշտութիւնը: Ժողովը աեղի ունեցաւ Բոնակոթ գիւղում: Անդրանիկը բաց արաւ ժողովը, ապա քաշւեց հարեւան սենեակը, որտեղից անշուշտ լսեց ժողովում թեր եւ դէմ խօսողների կարծիքը եւ մէկ էլ յանկարծ ներս մտաւ եւ արտասաննեց իրեն յատուկ կրակոտ ճառերից մէկը. չեշտեց որ ժողովականները պէտք է կտրուկ կերպով որոշեն, թէ ի՞նչ են ուղում՝ «կիսալուսին, թէ՞ խաչ»: Արշաւանքի դէմ արտայայտող Յակոր Տէրունին եւ Գէորգ Գրիգորեանն անգամ հարկադրւած եղան համակերպելու, բայց աւելի շուտ վախից գրգւած եւ ոչ թէ ներքին համոզումից: Անդրանիկը ժողովից յետոյ շատ էր ջղայնացած եւ շարունակ «վարժապետներին» էր հոլովում իրեն յատուկ ածականներով:

Նախնական պատրաստութիւններից յետոյ տեղի ունեցաւ արշաւանքը: Սեպտ. 23-ի արշալոյն է: Մերոնք արդէն գրաւել են ուղմական բոլոր կարեւոր գիրքերը: Թուրքական գիւղերը յամառ կերպով դիմադրում են, սակայն վերջը քաշւում են դէպի Նախիջեւանի սարերը. այդ գիւղերը կրակւեցին, այրւեցին ու ամայացան, հետեւապէս իարիսի զառնալու հնարաւորութիւնից զրկւեցին: Անդրանիկը երբ տեսաւ ընկած թուրքերի դիակները եւ նրանցից հոսող արիւնը, արտասեեց եւ ձեռները ջղաձգօրէն բարձրացրեց դէպի երկինք ու գոչեց՝ «Թո՛ւ, երէ կաս, Ասուա՛ծ, եւ իմ Հայաստան երկրի ողջակիւլը տաքար, ա՛ս ալ տաք» . . .

Այդ կոիւներում մի քանի անգամ Անդրանիկի կեանքը մազից էր

կախւած, նրա կրծքի շքանշանները, գորշագոյն մեծ գդակը եւ զօրավարական ոսկեայ ուսաղիբներն ու փայլուն համազգեստը մատնում էին նրան, եւ թշնամին, որ դիմագրում էր յուսահատօրէն, իր մահից առաջ ցանկանում էր վրէժիսնդիր լինել դասաք (մսագործ) փաշայից: Այդպէս էին կոչում նրան թուրքերը, եւ պէտք է ասել անիրաւ տեղը, քանի որ Անդրանիկը բարի եւ առաքինի յատկութիւններով էր օժտւած: Նա իր ձեռքով արիւն թափել չգիտէր: Իսկ եթէ դարձաւ Փիղայի, հայդուկ եւ վրէժիսնդիր կուռղ, այդ էլ կեանքի անարդար պայմանների հարկադրանքով տեղի ունեցաւ, այլապէս Սասնոյ Արծիւը կարող էր մինչեւ իր կեանքի վերջն էլ մնալ իբր մի համեստ շապին-դարահիսարցի ատաղձագործ . . .

Յայտնի է, որ կոիւներում հրամանատարները աշխատում են հագնել գորշ գոյնի համազգեստ եւ մէկդի են նետում աւելորդ շըքանշանները՝ թողնելով նրանցով պճնեւելու սովորոյթը խաղաղ օրերին: Անդրանիկը, սակայն, այդպիսի գլուշութիւններից զուրկ էր: Այդ հողի վրա տեղի ունեցաւ մի դէպք, որ այնուհետեւ երբեք չը մոռացանք: Կուրի ընթացքում, Սեպտ. 23-ին, դէզի մէջ թագնւած մի հուժկու թուրք տղամարդ անվերջ կրակում էր Անդրանիկի ուղղութեամբ: մի զնդակ եկաւ վզզալով անցաւ նրա կողքով: Ես նկատեցի, որ նշան բռնուղը յատկապէս Անդրանիկին էր ուզում խիել, անմիջապէս ուժով հրեցի նրան եւ գլորեցի չոր առուի մէջ ու ինքս էլ պառկեցի մօտը եւ, դիրք բռնելով, սկսեցի անընդհատ կրակել դէպի դէզի ուղղութեամբ: Դէզի չորացած խոտը սկսեց ծխել, ապա այրւել, իսկ հուժկու թուրքը վիրաւոր՝ շարունակում էր դիմադրել: Շուտով վրա հասան զօրամասի զինւորները, շրջապատեցին դէզը եւ միջից հանեցին յաղթանգամ թուրքին, որի ձեռները ջարդւել էին զնդակներից: Այդ հերոս տղամարդը խոստովանեց, որ ցանկանում էր ըսպանել փայլուն համազգեստով փաշային . . .

Սեպտ. 24-ին գիշերեցինք թագագիւղում: Հետեւեալ օրն անցանք Ռւկ, ապա Դարաքիլիսա: Դրութիւնը թէպէտ նախանձելի չէր արտաքին ճակատներում, բայց գոյն Սիսիանի ճակատից անմիջական վտանգ չկար: Նախիջեւանի Աստապատ գիւղացի Յ. Մ.-ին յաջողւել էր գիշերով գնալ մինչեւ իրենց գիւղը եւ վերադառնալ: Նրա ասելով Նախիջեւանի ամբողջ շրջանում հայ չէին թողել. տղամարդկանց եւ կանանց կոտորել էին, իսկ գեղեցիկ աղջիկներին տարել. չէին ինայել եւ երեխաներին: Գիւղերի մէջ շատ տներ դեռ լեցուն էին հայերի դիակներով, ինչպէս եւ հարեմները հայ գեղուհիներով . . .

Գորիսի շրջանում դրութիւնը սպառնական էր Ղարաղլազն այ-

լըսելուց յետոյ : Թուրքերն աւելի համարձակ էին դարձել եւ սկսել էին յաբձակւել Զանգեղուրի վրա երեք ուղղութեամբ՝ կոռինձորի, Խոզնավարի եւ Խանածախի :

Ե.

ԻՆՔՆԱՊԱՇՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ղարաղլաղի աւելումից յետոյ , թուրքերն այնքան սրտապնդւեցին , որ իջան եայլազներից իրենց լքած գիւղերը եւ կրկին փակեցին խճուղին , այնպէս որ երթեւեկութիւնը կրկին Դարարասի լեռնային դժւարին ճամբովն էր կատարւում : Սեպտ . 27-ին այդ ճամբով երրորդ պատգամաւորութիւնն եկաւ Գորիսից , Զանգեղուրի Աղգային Խորհրդի կողմից՝ ինդրելով շուտափոյթ օգնութիւն : Եկողները ասաջարկեցին Անդրանիկին երկրորդ անգամ հիմնաւորապէս մաքրել Աղուտի եւ Վաղուտին , այլ եւ բանալ խճուղին : Աստւած չանի , ասացին պատգամաւորները , եթէ Բուն Զանգեղուրի հայ ժողովուրդը մէկ օր հարկադրւած լինի նահանջելու դէպի Հայաստանի Հանրապետութեան սահմանները , Սիսիանի վրայով Դարալագեազ , եւ Աղուտին փակ պահէ նրա միակ կարձ խճուղին , այն ժամանակ նահանջողները մէկ-մէկու կուսկուել կարող են ձորերի ճամբին , իսկ շատ շատերը կը գլուրեն ձորերն ու անդունդները : Պատգամաւորները նըմանապէս յայտնեցին , որ աշխոյթ յարձակումները Գորիսի շրջանի Հայկական գիւղերի ուղղութեամբ բացատրւում է տաճկական ուժերի ժամանումով կարեագին : Սիսիանի անպաշտպան չթողնելու համար , Անդրանիկը կարգադրեց Սասունցիներին եւ Եապոնին , որ դան Սիսիան եւ մնան մի առժամանակ այնտեղ . կարգադրեց նաեւ , որ Սիսիանից 100 զինուր զնայ Գիւմրի-Գժաձորին օգնութեան : Բուն Սիսիանի ինքնապաշտպանութեան համար որոշւեց զէնքի տակ առնել 25-31 տարեկան երիտասարդներին : Այդ նոր վաշտերը գրաւեցին անմիջապէս Բաղարչայ-Գիւմրի-Գժաձոր - Բունունիս - Թաղագիւղ - Ալիլաթեան - Ալիլու սազմագծերը : Զօրահաւաքը տեղի ունեցաւ տենդային արագութեամբ , բոլոր գիւղերում , երեք օրուայ ընթացքում : Սիսիանի տեղական նորաստեղծ գումարտակի հրամանատար կարգւեց փոխ-դլիսապետ Հայկ Գրիգորեանը , որ նախիջեւանցի մի բարեխիղճ եւ քաջ սպայ էր :

Սեպտ . 28-ին հարւածող Զօրամասը՝ Անդրանիկի դեկավարութեամբ՝ Սիսիանից Ուչ-Թափալարով շարժւեց զէպի Գորիսի : Աղուտին եւ Վաղուտին դարձեալ գիմագրեցին նրան : Շուշու գնդի

դաշտային թնդանօթները որոտացին, հարւածելով թուրքերին, որոնք չուտով թողին իրենց տները եւ քաշւեցին ձորն ի վայր, Ուրուստի (Որոտնայ) վաճքը եւ համանուն գիւղը: Զօրամասը գիշերեց լաց դաշտում: Գորիսից ևկան սուրհանդակներ, որոնք նամակ բերին Անդրանիկին, որով յայտնում էր, թէ թուրքերն արդէն դրաւել են հայկական Խողնավար գիւղը, եւ ինպրում էր շտապել օդնութեան:

Զօրամասը Սեպտ. 29-ին Գորիսի մօտերքումն էր, Շաքար-Զուր կոչւած վայրում, երբ հասան նոր սուրհանդակներ եւ աւետեցին, թէ թուրքերը 15 վերստ նահանջել են: Զիաւորներն արագացրին ընթացքը: Երեկոյեան զօրամասը Գորիս մտաւ ուրախ հրացանաձգութեամբ. տեղացիք մեծ հանդէսով դիմաւորեցին մարտիկներին:

Սեպտ. 30-ից մինչեւ հոկտ. 10-ը մենք ապրեցինք անորոշ եւ տարտամ վիճակ. մեր գլխաւոր, եթէ չասեմ միակ անելիքն էր՝ ինքնապաշտպանութեան կազմակերպումը: Որքա՞ն զէնք եւ ուազմամը-թերք կայ, որքա՞նն է անհատական: Քաղաքում գտնւած բոլոր ռազմամթերքի պահեստները հարկաւոր էր միացնել եւ ենթարկել կենտրոնական մէկ իշխանութեան, տեղական երիտասարդներին զօրակոչի ենթարկել, կազմել կանոնաւոր վաշտեր, որոշել գերքերը եւ կարգաւորել զինուորների եւ ձիերի ուտեստը:

Զմեոը մօտենում էր. Երեւանից դէպի Դարալագեազ ու Ղարաբաղ տանող ճամբաները չուտով ծածկելու էին ձիւնով: Այդ օրերին Երեւանից հասնում են Գորիս երեք սպաներ, եւ երկու ծանօթ հասարակական գործիչներ՝ փոխ - գլխապետ Մտեփան Սարգսեան, փոխ - գլխապետ Մելիք-Հուսէյնով, սպայ Ռուբէն Նարինեան. հասարակական գործիչներից յիշում եմ միայն Կոստիա Աթայեանին: Դրանց բերած թերթերից տեղեկացանք, որ Սեպտ. 14-ին տաճիկները գլուրաւել են Բագում եւ Միանան ու Թաւրիզն էլ գտնւում են տաճիկների ձեռքում: Այդ լուրերի ազգեցութիւնը շատ ուժեղ էր. լաւ է, որ առաջ չէին ստացւել, եթէ ոչ կարող էին վատ ազգել թէ Անդրանիկի եւ թէ մանաւանդ ժողովրդի վրա եւ զուցէ այն ժամանակ տեղի չունենային Հրթօփիւղի, Զօմարտլուի եւ Արաւիսի, ինչպէս եւ Աղուտու եւ Վաղուտու վերջին արշաւանքները, որոնք այնքան բարերար եղան Սիսիանի եւ Զանգեզուրի համար՝ թէ քաղաքական -ուազմական եւ թէ տնեսական-հաղորդակցական տեսակէտից:

Վերոյիշեալ հինգ հոգու Գորիս դալը մեծ կասկածների եւ մտատանջութեան մէջ ձգեց Անդրանիկին, մանաւանդ որ նրանք եկել էին Երեւանի Հանրապետական կառավարութեան կողմից եւ որոշ առաքելութեամբ: Յայտնի է, որ Անդրանիկն անձնական դրդապատճառ-

Ներով գժտւած էր՝ հանրապետութեան մարմնացումը հանդիսացող Արամի եւ այլոց հետ, խոռված էր եւ Հ. Յ. Դաշնացութիւնից, սակայն շարունակում էր իր պաշտամունքը Քրիստովոր Միքայէլեանի եւ Սիմոն Զաւարեանի հանդէս. մեծ յարգանքով էր վերաբերում Ռոստոմին եւ պատրաստ էր միշտ նրա խօսքը կատարելու։ Ինքն էլ շարունակում էր այն գործը, որ տասնեակ տարիներից ի վեր վարում էր Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ հայ ժողովրդի ինքնապաշտուանութեան գործը։

Իր կասկածների մէջ Անդրանիկն այնքան հեռու էր գնացել, որ ենթադրում էր նոյն իսկ, թէ իրեն ահարեկելու համար են եկել Երեւանից։

Տրւած բացատրութիւնների վրա՝ նա հանգստացաւ, եւ նոյն իսկ Երեւանից եկած հիւրերի հետ միասին ճաշեցինք եւ խմեցինք Հայաստանի հանրապետութեան, Անդրանիկի ու Հ. Յ. Դաշնակցութեան կենացը։ Այդ օրը Անդրանիկի աչքերում նշմարեցի արտասուզի կաթիւներ։

Թերթերի լուրերից յետոյ, ըստ երեւոյթին, շատ բան փոխւել էր գէպի լաւը, քանի որ Դարաբասի ըլջանային կոմիսար Դաւիթ Տէր-Մկրտչեանը հաղորդում էր, թէ Շիլարի թուրքերը հեռանում են ըլջանից եւ ինդրում են Հայերից օպուել իրենց ցանքերից եւ ալ-ներից, միայն չայրել։ Ուրիշները հաղորդում էին, թէ Նորսի սարերից թերթանօթի ձայներ են լսում եւ իրը թէ թուրքերը քաշում են Նախիջեւանի շրջանից ու այրում են Հայկական գիւղերը։ Ենթադրում էր, թէ անդլիացիք Թաւրիզի վրայով առաջանում են գէպի Զուլֆա-Նախիջեւան։ Միւս կողմից էլ երբեմն-երբեմն Ղափանից եւ Մեղրիից լուր էինք ստանում, թէ Թիղանօթի ձայներ են լսում Պարսկաստանի ուղղութեամբ։ Անհրաժեշտ էր նկատում, որ նման պարագաներում Զօրամասը տեղափոխւէր Սիսիան եւ հետեւէր ըրջանի անցուղարձերին։ Հոկտ. 10-ին որոշւեց անցնել Սիսիան, բայց յետաձգւեց, որովհետեւ Տեղ գիւղից հեռախօսով յայտնեցին, որ Շուշուց պատւիրակութիւն է եկել։

Նախ քան պատւիրակների Գորիս գալը, հեռախօսով յայտնեցին, թէ Դաշնակիցները զրաւել են Բուլղարիայի մայրաքաղաք Սօֆիան եւ բուլղարներն անջատ հաշտութիւն են կնքել։ յոյները մասնակցում են պատերազմին ի նպաստ դաշնակիցների։ Վերջինները պաշարել են Մեցը։ Այս լուրերը շատ լաւ տպաւորութիւն թողին մեզ վրա, բայց գժրախտութիւն էր, որ պատւիրակութիւնը Շուշուց էր գալիս, տաճիկների կողմից, սպիտակ դրօշակով, հետեւապէս

ինչոր մի խորհրդաւորութիւն կար : Երեկոյեան դէմ , Հռկտ . 11-ին , Շուշուց եկողները հասան Գորիս : Երեք հոգի էին՝ Մուշեղ Զաքար- եան , Բ . Եւ Ս . Բ .՝ Երեք կուսակցութիւնից՝ դաշնակցական , սոցիալ- դեմոկրատ եւ Ժողովրդական :

Նեղ ու սեղմ շրջանում ժողով է . եկած պատւիրակները յայտնե- ցին , որ Սեպտ . 25-ին տաճիկները գրաւել են Շուշին . տաճիկների ուժերի մասին ստորյադ տեղեկութիւն չունին . Ասկեարանի շրջանի մի քանի հայկական գիւղեր ուժրակոծւել են , իսկ Շուշին գրաւել են ա- ռանց դիմադրութեան : Երիտասարդների զինւած մասը հեռացել է քաղաքից , իսկ իրենց էլ ուղարկել են հաղորդելու Շուշու գրաւման լուրը : Պատւիրակները յայտնում են , որ երբեք ցանկութիւն չունին վերադասնալու Շուշի , մանաւանդ որ իրենք զանդեղուրցիներ են , իսկ դաշնակցական Մուշեղ Զաքարեանը գործակցում է մեղ այնու- հետեւ իրեւ լուսաւորութեան բաժնի վարիչ :

Զ .

ՏԱՃԿԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Հռկ . 12ին սլարդւեց պատւիրակութեան բերած թղթերից , որ տա- ճիկները Զանդեղուրի գաւառապետ են նշանակել թժիշկ Միքայէլ (Մի- շա) Պարոնեանին , որ Ազգ . Խորհրդի նախագահն էր , իսկ գաւառակա- պետի պաշտօն են տւել Նիկոլայ Յովսէփեանին , որ անդամ էր նոյն Ազգային Խորհրդի : Այդ գրութիւնների առիթով տեղի են ունենում անախորժութիւններ . Անդրանիկը ջղայնացած անպատւում է յիշածո հասարակական դործիչներին , թէ ինչո՞ւ տաճիկները նրանց են վրա- տահացել եւ կարեւոր պաշտօններ յատկացրել : Այդ մի աւելորդ մե- ղադրանք էր իհարկէ , որովհետեւ տաճիկները վերջ ի վերջոյ պէտք է աչքի առաջ ունենային այնպիսի դործիչների , որոնց հաշւի առնէր Զանգեզուրի համայն ժողովուրդը եւ որոնք փոքր ի շատէ հեղինակու- թիւն ունենային բոլորի աչքում : Այլ խնդիր է , թէ ժողովուրդը եւ յի- շած գործիչները պիտի համաձայնէին ընդունիլ տաճկական տիրա- պետութիւնը . . .

Բագուի , ապա եւ Շուշու անկումը շշմեցուցիչ տպաւորութիւն էր թողել Գորիսի եւ շրջակայքի գիւղերի վրա : Պատւիրակները իրենց հետ բերել էին եւ մի տպւած կոչ , որով Նուրի փաշան Գանձակից դի- մում էր Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայերին՝ յորդորելով ենթարկ- ել Աղրբէջանի իշխանութեանը , այլապէս սպառնում էր պատժել :

Այդ կոչի մէջ յիշւած էր, որ Անդրանիկը իբր թէ կաշառւած է անգլիական ոսկիներով եւ ժողովուրդին դէպի կորուստ է տանում: Պատւիրակութեան տւած գեկուցումից յետյ՝ քաղաքական կացութիւնը ճանաչւեց լուրջ եւ ծանրակշիռ, ուստի որոշեց հրաւիրել ընդհանուր ժողով, ուր գաւառի բոլոր գիւղերի ներկայացուցիչները պիտի ծանօթանային ստեղծւած վիճակին եւ վճռէին իրենց անելիքը: Դրժախտաբար, տեղական վաշտերի զինուրները, որոնք գտնւում էին Գորիսի զօրանոցներում, բոնեցին դասաւութեան ճամբան, հէնց որ իմացան կացութեան լրջութիւնը: Հոկտ. 13-ին Զինուրական Խորհուրդը անհրաժեշտ համարեց ուժեղացնել Սիսիանի ճակատը, ուստի եւ Առաջին ու Երրորդ հեծեալ վաշտերը ուղեւորւեցին դէպի Սիսիան:

Նոյն օրը Զանգեզուրի շրջանի գիւղական ներկայացուցիչները հաւաքւեցին Գորիս. ներկայ էին 61 պատգամաւորներ եւ կոմիսարները: Ժողովի սկզբում ընդհանուր տրամադրութիւնը դիմադրելու կողմն էր, մանաւանդ մարտական կեցւածք ունէին Տեղի, կոռինձորի, Խանածախի եւ այլ գիւղերի պատգամաւորները: Ժողովի ընթացքում, յանկարծ, կոռինձորից յայտնեցին, որ իբր թէ 1100 թիւրք զինուրներ թնդանօթներով հասել են Ղարաբաղաղ: Այս լուրն իրարանցում ձգեց ժողովականների մէջ, մանաւանդ որ նախագահն էր թէ. Մինաս Տէր Մինասեանը, մի տարտամ անձնաւորութիւն, իսկ ժողովականների շարքում կար հետագային մեծամասնական յայտնի դործիչ Արմենակ Ղարաբեկեանը, որ համամիտ էր Զանգեզուրը Աղրբէջանին կցելու գաղափարին, քանի որ կարմիր բանակը գալու էր նախ Աղրբէջան, այսինքն՝ Բագու եւ Գանձակ, ապա Ղարաբաղ-Զանգեզուրը: Այդ օրը մի կրակու ճառ ասաց Անդրանիկը, սակայն արդէն շատերի մտքերը պղուրուել էին. Գորիսի ներկայացուցիչներից ոմանք առաջարկում էին դիմադրել, եթէ եկողները անկարգ զօրք են եւ բաղկացած են տեղական թիւրքերից, իսկ եթէ կանոնաւոր զօրք են՝ անձնատուր լինել: Ոմանք էլ ասում էին, թէ Բագուն, Գանձակը եւ Շուշին անձնատուր լինելուց յետոյ մենք էլ նոյնը պէտք է անենք, որ չկոտորւենք: Գիւղացի պատգամաւորները առաջարկում էին բոլոր գէպեհը ըստ գիմադրել, քանի որ տաճիկները կոտորել են Բագւի հայերին, իսկ Գանձակում եւ Շուշում տակաւին չեն կոտորում, որպէսզի ընկճեն գաւառները՝ Լեռնային Գանձակը, Գարտմանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան, Դիզակը, ապա եւ Զանգեզուրը: Երեկոյեան դէմ պարզեց խորհրդակցութեան արդիւնքը. Ժողովը 27 ձայնով ընդդէմ 21-ի որոշեց գիմադրել եւ կատարեց Զօրավար Անդրանիկի բոլոր պահանջները: Նման կարեւոր ժողովում 13 հոգի ձեռնպահ էին մը-

նացել . գրանց եւս հաշւեցինք դէմ . նման պայմաններում ձեւական մեծամասնութեան որոշումը իսկապէս փոքրամասնութիւն էր :

Անդրանիկն անմիջապէս իրեն մօտ հրաւիրեց Շուշու եւ Գանձակի գնդերի հրամանատարական կազմին , սպաններին եւ իր նշանաւոր վաշտապետներին . տեղի ունեցաւ զինւորական խորհուրդ , ուր միաձայնութեամբ որոշվեց դուրս գալ Գորիսի փոսից եւ սպառնական դիրք գրաւել Ուչխափալարներում : Իւազմամթերքը պէտք էր փոխադրել Սիսիան , իսկ եթէ չկարողանայինք այդ անել , պէտք էր պայմթեցնել , որպէսզի թշնամու ձեռքը չընկնէր : Դուրս դալու վայրկեանին պէտք է կոչ ուղղւէր տեղական զինւած երիտասարդութեան հետեւելու Զօրամասին եւ բարձրանալու Ուչխափալարները : Ամբողջ գիշերը տենդոտ աշխատանք տեղի ունեցաւ :

Հոկտ . 14-ին , առաւօտեան արշալոյսին , զօրքերը կազմ ու պատրաստ էին : Մի մասն արդէն նախորդ օրը մեկնել էր Սիսիան , իսկ մնացածը հաւաքւել էր Գորիսի հրապարակը : Պարզ նկատելի էր հասարակութեան բարոյալքւած վիճակը : Զօրամասի մեկնելուց առաջ խօսեցաւ դարալագեազցի Գրիգոր աւագ քահ . Տէր-Աւագեանը , Խանասորի պատմական տէրտէրը : Նա յայտնեց որ Զանդեղուրի շրջանի ժողովրդի անվճռականութիւնը եւ կուելու չկամութիւնը կարող են մեծ վնասներ հասցնել Զանդեղուրին , այլ եւ աղղել Ղափանի եւ Սիսիանի հայութեան վրա : Անդրանիկը արտասանեց հրաժեշտի իր ճառը եւ ողեւորեց բարոյալքւածներին : Նա յայտնեց , որ ժողովրդի անվճռականութիւնը ստիպում է իրեն լինել շատ զգոյշ՝ ապագայ պատասխանատւութեան հանդէպ , որ այդ տատանումը հարկադրում է իրեն հսուսափել կուից Բուն Զանդեղուրում , բայց հայժողովրդի համար կայ միայն վրկութեան մի ճամբայ , դա՛ ոչ դաղթն է , ոչ տաճկական տիրապետութիւնը , այլ միա՛յն եւ միայն սրբազն կոփւը . պէտք է կուել եւ յաղթել , իսկ եթէ վիճակի մեռնել , գոնէ կը մեռնենք պատով : Վերջում Անդրանիկը երգւեց ; որ ճիշդ է Գորիսից հեռանում է , բայց չի կորւում նրանից . նա զօրքի մի մասը միշտ շփման մէջ է պահելու քաղաքի հետ եւ երբ շըրջանը հաստատ վճռէ կուել , առաջին հրացանի պայմթիւնի հետ ինքը պատրաստ է օգնութեան հասնելու : Զօրքերը շարժւեցին դէպի Սիսիան , մենք էլ նրանց հետ . . .

Տեսարանն իրօք եզակի էր . Դաւիթ Բէկի օրերից ի վեր նման երեւոյթ չէր պատահել . Գորիսի բարձռունքից մինչեւ Սիսիանի Ղարաքիլիսա գիւղը , ամբողջ ճանապարհին , բանակ էն դրած զօրամասերը . ամենքը բացօթեայ , իսկ Անդրանիկը՝ վրանի տակ : Այդտեղ էին

Եւ Շուշու ու Գանձակի գնդերի մնացորդ զինւորները իրենց սպաներով, իսկ տաճկահայ դաղթականութիւնը զօրքից առաջ էր գուրս եկել Բուն Զանդեղուրից եւ արդէն լցւել էր Սիսիանի, մանաւանդ լքւածթրքական գիւղերը: Կատարելապէս հայացել էր Սիսիանը: Այդ գիւղերը, ժամը 11-ին, հասնում է Սիսիանի շրջանի լիազօր Զաքար Տէր - Ղազարեանը, պարթե հասակով մի քաջ երիտասարդ: Նա իր հետ բերել էր Երեւանից նոր հասած նամակներ, որոնց համաձայն Բուղարիան հաշտւած էր եւ զինաթափ եղած, Զաթալան ոմքակոծւում էր, տաճկական զօրքերը կովկասից քաշւում էին՝ Պոլիսը սպաշտպանելու համար, եւ դաշնակիցները մտել են արդէն գերմանական հողը: Ինչ ասել կուզէ, այդ սրտապնդիչ լուրերը շատ ոգեւորեցին Անդրանիկին, նրան շրջապատողներիս եւ բոլոր զօրքերին: Անմիջապէս գիշերով այս լուրերը հաղորդւեցին Գորիսի Աղդային Խորհրդին, որպէսզի չենթարկւեն տաճիկներին: Անդրանիկը յայտնեց, որ ինքը չուտով կը վերադառնայ Գորիս: Ռազմական նոր հեռանըկարներ էին բացւում. նախ պէտք էր արգիլել տաճիկների մուտքը Զանդեղուր, յետոյ արշաւել դէպի Շուշի եւ յետ մղել Ղարաբաղից տաճկա-թրքական ուժերը, ապա առաջ շարժւել դէպի Գանձակ-Եւլախ . . .

Հակառակ քաղաքական այդ լաւատես լուրերին, Հոկտ. 15-ին իմացանք, որ տաճիկները առաջարկել են Նորս-Մաղրա-Գիւմրի - Գժաձոր շրջանի հայութեանը ենթարկւել իրենց: Այդ առթիւ Ղարաբիլսայում տեղի ունեցաւ Սիսիանի շրջանի կոմիսարների եւ ժողորդագական ներկայացուցիչների համագումարը: Այս անդամ եւս քաջարի սիսիանցիք միաձայն որոշեցին կուել մինչեւ վերջը: Մահ կամ ազատութիւն - իրօք այդ եղաւ միշտ Սիսիանի կարգախօսը: Համագումարը որոշեց՝ ա) կուել մինչեւ արեան վերջին կաթիլը. բ) զօրահաւաքի ենթարկել 20-40 տարեկաններին. գ) բոլոր միջոցներով բաւարարել զօրավար Անդրանիկի պահանջներին:

Համագումարը վերջացած էր, երբ վրա հասաւ Զանդեղուրի կենտրոնական Աղդային Խորհրդի անդամ Արշակ Շիրինեանը, որ, իր Զանդեղուրի պատւիրակ գնացել էր Երեւան՝ իմանալու քաղաքական վիճակը եւ խնդրելու օժանդակութիւն Հայկական կառավարութիւնից: Թէպէտ Երեւանի կառավարութիւնը համաձայն չէր Զանդեղուրի ժողովրդի տեսակէտին, այնուամենայնիւ Ա. Շիրինեանը, իրբեւ իսկական յեղափոխական, յայտնել էր բացարձակապէս, որ ինքը կանգնած է Զանդեղուրի հայ ժողովրդի տեսակէտի վրա՝ այսինքն չհանդուրժել տաճկական կամ ազրէջանական տիրապե-

տութեանը, եւ կռւել մինչեւ վերջը: Որոշեց Շուշու գնդի վաշտը պահել Սիսիանում, գնդապետին էլ նրա հետ, այնտեղի ինքնապաշտպանութեան համար, իսկ Հարւածող զօրամասը տեղափոխել Գորիս:

Հոկ. 16ին Գորիսից նոր նամակ ստացւեց. քաղաքում ամբողջ շըր-ջանի ներկայացուցիչների համագումարն է տեղ իունեցել, որ վճռել է կռւել եւ հետեւաբար հրաւիրել Անդրանիկին եւ նրա զօրամասին: Զօրամասը ճամբար էր ընկել արդէն Սիսիանից դէպի Գորիս, երբ եկան Բուն Զանդեղուրի համագումարի կողմից լիազօրւած ներկայացուցիչները եւ ինդրեցին Անդրանիկին գնալու Գորիս: Զօրամասը հուռուաներով ճանապարհ ընկաւ եւ երեկոյեան հասաւ Գորիս:

Ընդունելութիւնը խանդավառ էր: Նոյն օրը հասան եւ Ղափանի արջանի ներկայացուցիչները, որոնք յայտնեցին, թէ Ղափանն էլ որոշել է կռւել:

Թաւրիգ

(Շարումակելի)

